

Կարծիք

Նարինե Անդրանիկի Բուկուշյանի «Բանավոր թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգը (կոմպետենտային մոտեցման հիման վրա)» ԺԳ.00.02 – Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ժամանակակից աշխարհում օրեցօր աճում է բազմալեզու թարգմանիչներ պատրաստելու անհրաժեշտությունը: Այս հիմնախնդիրը միշտ էլ եղել է արդիական, քանի որ միջազգային համագործակցությունը՝ գիտաժողովների, սեմինարների, նախագծերի և այլնի տեսքով, ենթադրում է լեզվական խոչընդոտների հաղթահարում: Բանավոր եռալեզու թարգմանության ուսուցման ուսումնամեթոդական ձեռնարկների բացակայությունը ռուսերեն, անգլերեն և հայերեն լեզուների ընդգրկմամբ, նույնպես փաստում է հետազոտության թեմայի արդիականության մասին: Հաշվի առնելով բանիմաց մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը՝ ատենախոսն իրականացրել է լրջագույն հետազոտություն և ներկայացրել համապատասխան ռազմավարություն:

Նարինե Անդրանիկի Բուկուշյանը փորձել է մշակել եռալեզու բանավոր թարգմանության կոմպետենտահեն մեթոդական համակարգ, որը նպատակ ունի բարելավել ՀՀ բուհերում բանավոր թարգմանիչների պատրաստման գործընթացը, փորձարկել է այն բակալավրիատի «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ)» մասնագիտության կրթական ծրագրով սովորող եռալեզու ուսանողների հետ: Հետազոտության ընթացքում ատենախոսն ուսումնասիրել է բանավոր հաջորդական թարգմանության առանձնահատկությունները և բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության կադապարը, վերլուծել է «Թարգմանչական գործ» մասնագիտության կրթական ծրագիրը, մշակել և փորձարկել է բանավոր թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգը, որն ուղղված է բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանն ու զարգացմանը՝ ռուսերեն, անգլերեն և հայերեն լեզուների ուսուցման շրջանակում:

Հետազոտությունը հիմնվել է նաև ոլորտի հիմնարար ուսումնասիրությունների և Եվրախորհրդի լեզվակրթական փաստաթղթերի վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և վեց հավելվածից: Ներածության մեջ ատենախոսը հանգամանորեն հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպել հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության նախնական վարկածը,



Handwritten text in a cursive script, likely a signature or a note, written on a piece of paper.

մեթոդաբանական հիմքերը: Բավականին լավ է ներկայացված հետազոտության նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Բակալավրիատի եռալեզու ուսանողների բանավոր թարգմանչական գործունեության ուսուցման տեսական հիմքերը «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ)» ծրագրի շրջանակում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Բազմալեզվության համատեքստում բանավոր թարգմանչի պատրաստման ժամանակակից պահանջները» ենթագլուխը նվիրված է բանավոր բազմալեզու թարգմանիչների պատրաստման առաջավոր փորձի ուսումնասիրմանը: Այս նպատակով ատենախոսը հանգամանորեն վերլուծել է Ռուսաստանի և Եվրոպայի առաջատար մասնագիտացված ուսումնական հաստատությունների թարգմանիչներ պատրաստող բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը՝ փաստելով, որ բանավոր թարգմանության ուսուցանումը սկսվում է բակալավրիատում գրավոր թարգմանության ուսուցումից հետո և շարունակվում է մագիստրատուրայում՝ բանավոր թարգմանության մեջ մասնագիտանալով: Ուսանողները մասնագիտանում են առնվազն երկու օտար լեզուներով՝ ձևավորելով մի շարք կոմպետենցիաներ:

Վերլուծելով բանավոր բազմալեզու թարգմանիչների պատրաստման ժամանակակից պահանջները և առաջավոր փորձը, հիմնավորելով բանավոր բազմալեզու թարգմանիչների պատրաստման անհրաժեշտությունը նաև մեր երկրում, ատենախոսը մանրամասն ներկայացրել է «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ)» ծրագրով սովորող բակալավրիատի եռալեզու ուսանողների մասնագիտական պատրաստման առանձնահատկությունները:

Երկրորդ՝ «Բանավոր հաջորդական թարգմանությունը որպես թարգմանչի մասնագիտական գործունեության տեսակներից մեկը» ենթագլխում Նարինե Անդրանիկի Բուկուշյանը ներկայացրել է բանավոր թարգմանության և մասնավորապես բանավոր հաջորդական թարգմանության տեսակները, բանավոր հաջորդական թարգմանության բնութագիրը և գործընթացը: Բանավոր հաջորդական թարգմանությունը հեղինակը դասակարգել է ըստ ձևի՝ արագագրությամբ և պարբերություն-նախադասությամբ և ըստ ուղղության՝ միակողմանի և երկկողմանի թարգմանությամբ: Նա հաջորդական թարգմանության գործընթացը բաժանել է երեք փուլի՝ ընկալման և թարգմանչական արագագրության փուլ, վերարտադրման փուլ և վերահսկման փուլ: Առաջին փուլը ներառում է հետևյալ թարգմանչական գործողությունները՝ ունկնդրում և վերլուծություն, վերարտադրում (թարգմանչական

արագագրություն), հիշողություն (կարճաժամկետ հիշողություն) և համակարգում: Երկրորդ փուլը ենթադրում է հետևյալ թարգմանչական գործողությունների կատարում՝ հիշողություն (երկարաժամկետ հիշողություն), գրառումների ընթերցում, վերարտադրում և համակարգում: Վերահսկման փուլը նախատեսում է բանավոր թարգմանչի կողմից սեփական թարգմանչական գործունեության վերլուծություն՝ իր մասնագիտական գործունեության արդյունքները բարելավելու նպատակով սեփական թերությունների բացահայտման և վերացման միջոցով, քանի որ բանավոր թարգմանչի համար չափազանց կարևոր է կարողանալ ճիշտ բաշխել իր մտավոր ունակությունները բանավոր թարգմանություն կատարելիս՝ մտավոր գերժանրաբեռնվածությունը կանխելու նպատակով:

Երրորդ՝ «Բակալավրիատի եռալեզու ուսանողների մասնագիտական պատրաստման առանձնահատկությունները «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ)» ծրագրի շրջանակներում» **ենթագլխում** հեղինակի կողմից ուսումնասիրվել է Հայաստանում բազմալեզու թարգմանիչների պատրաստման ոլորտում տիրող իրավիճակը, վերլուծվել են «Թարգմանչական գործ» մասնագիտությամբ բակալավրիատի մասնագիտական կրթական ծրագիրը, ինչպես նաև եռալեզու ուսանող-թարգմանիչների մասնագիտական պատրաստման ընթացքում ռուսերենի, անգլերենի և հայերենի փոխազդեցության աստիճանը պայմանավորող գործոնները և եռալեզվության ազդեցությունը ուսանողների անձի վրա:

Գլուխ 2-ը՝ «Բանավոր թարգմանության ուսուցման մեթոդաբանական հիմունքները կոմպետենտային մոտեցման հիման վրա «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ)» բակալավրիատի ծրագրի շրջանակներում» բաղկացած է երեք ենթագլխից:

Այս գլխի առաջին՝ «Կոմպետենտային մոտեցումը որպես բանավոր թարգմանության ուսուցման գործընթացի կազմակերպման մեթոդաբանական հիմք» **ենթագլխում** հեղինակի կողմից ճշգրտվել են բանավոր թարգմանիչների պատրաստմանն ուղղված կոմպետենտային մոտեցման պահանջները, որտեղ ուսուցման կազմակերպումն ընթանում է ուսուցման անհատական, զույգային և խմբային ձևերի, նոր և ավանդական մեթոդների կիրառմամբ, մուլտիմեդիա միջոցների օգտագործմամբ, մանկավարժական վերահսկողության և սովորողների ինքնավերահսկողության իրականացմամբ, սովորողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Երկրորդ՝ «Բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության մոդելը և դրա ձևավորման մեթոդիկան» **ենթագլխում** մեկնաբանվել է «կոմպետենտություն» և «կոմպետենցիա (կարողունակություն)» տերմինների հարաբերակցությունը, առաջարկվել է բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության մոդել և ներկայացվել

բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված վարժությունների համակարգ: Մասնագիտացված գրականության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության մոդելի պարտադիր բաղադրիչներն են՝ թարգմանչական, լեզվաբանական, միջմշակութային, մշակութաբանական, դիսկուրսիվ, հետազոտական, մեթոդաբանական, թեմատիկ և տեխնոլոգիական կոմպետենցիաները:

Երրորդ՝ «Թարգմանչական ֆակուլտետի բակալավրիատի եռալեզու ուսանողների լեզվական պատրաստման առանձնահատկությունը բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության ձևավորման և զարգացման գործընթացում» **ենթագլխում** հիմնավորվել է բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության ձևավորման և զարգացման գործընթացում թարգմանչական ֆակուլտետի եռալեզու բակալավրիատի ուսանողների լեզվաբանական կոմպետենցիայի կատարելագործման կարևորությունը և ուսումնասիրվել է դրա առանձնահատկությունը: Ներկայացված վարժությունները լավ կառուցված են և ներառում են տարբեր թարգմանչական հմտություններ՝ թղթից թարգմանություն, գրավոր թարգմանություն, վերաձևակերպում: Դրական է, որ վարժությունները ներառում են բոլոր երեք լեզուները (հայերեն, անգլերեն, ռուսերեն) և պահանջում են թարգմանություն տարբեր ուղղություններով:

Գլուխ 3-ը «Բանավոր հաջորդական թարգմանության ուսուցման մեթոդիկայի փորձարարական ստուգումը «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ)» ծրագրի շրջանակներում» նույնպես բաղկացած է երեք **ենթագլխից**: Այս գլխում ատենախոսը ներկայացրել է բանավոր հաջորդական թարգմանության ուսուցման մշակված լեզվամեթոդական համակարգը՝ բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված վարժությունների համակարգով: Նկարագրված են անցկացված մանկավարժական գիտափորձի արձանագրող, ճշգրտող և վերահսկիչ փուլերը, ապա՝ փորձարարական ուսուցման արդյունքները:

Երրորդ գլխի առաջին՝ «Թարգմանչական ֆակուլտետի բակալավրիատի եռալեզու ուսանողների բանավոր հաջորդական թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգի կառուցվածքը» **ենթագլխում** նկարագրված է նշված լեզուների շրջանակներում բանավոր հաջորդական թարգմանության ուսուցման մշակված լեզվամեթոդական համակարգը ուսուցման նպատակներով և բովանդակությամբ, ուսուցման արդյունքների յուրացման վերահսկման տեսակների ու մեթոդների (գնահատման չափանիշները, վերահսկիչ-չափողական նյութերը և ինքնագնահատումը) ընդգրկմամբ: Մշակված լեզվամեթոդական համակարգը

նախատեսում է անհատական, գույգային և խմբային ուսուցման ձևերի օգտագործում: Իսկ ուսուցման մեթոդները ներառում են գրույց, բացատրություն, դերախաղ, ուսանողների ինքնուրույն աշխատանք, թեստավորում, խնդրային ուսուցման և իմիտացիոն մոդելավորման մեթոդներ:

Երկրորդ՝ «Մանկավարժական գիտափորձի արձանագրող փուլի ընթացքն ու արդյունքները» **ենթագլուխը** նվիրված է տվյալ ատենախոսական հետազոտության շրջանակներում անցկացված մանկավարժական գիտափորձի՝ ընդհանուր առմամբ, և մասնավորապես դրա արձանագրող փուլի նկարագրությանը: Մանկավարժական գիտափորձի ընթացքում առանձնացվել են երեք փուլ՝ արձանագրող, ճշգրտող (ստուգիչ) և վերահսկիչ:

Երրորդ՝ «Լեզվամեթոդական համակարգի կիրառմամբ բանավոր հաջորդական թարգմանության ուսուցման մանկավարժական փորձարկման ճշգրտող և վերահսկիչ փուլերի նկարագրություն» **ենթագլխում** ներկայացված են այս ատենախոսական հետազոտության շրջանակներում իրականացված մանկավարժական փորձարկման ճշգրտող և վերահսկիչ փուլերում կատարված աշխատանքները: Շարադրված են ռուսերեն, անգլերեն և հայերեն լեզուների շրջանակներում բանավոր հաջորդական թարգմանության ուսուցման մշակված լեզվամեթոդական համակարգի փորձարկման ընթացքն ու արդյունքները:

Կատարվել է հսկայածավալ աշխատանք: Հետազոտության եզրակացություններն արտացոլում են նրա առաջադիր խնդիրները, ամբողջական են, տրամաբանորեն փոխկապակցված: Հետազոտության ընթացքում օգտագործված գրականությունն արդիական է: Սեղմագիրը և հոդվածներն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Ուշադրության են արժանի ատենախոսի կողմից մշակված թե՛ արտադրողական և թե՛ ընկալողական առաջադրանքների շարքը:

Աշխատանքն ավելի կշահեր, եթե ատենախոսն ուշադրություն դարձներ հետևյալ դիտարկումների վրա.

1. Հեղինակը նշում է Infinitive (էջ 68), objective predicative construction (էջ 70) կամ subjective predicative construction with the infinitive (էջ 71) քերականական եզրերը անգլերեն և հայերեն, սակայն չի թարգմանում հայերեն, ինչը շատ կարևոր է եռալեզու թարգմանիչների պատրաստման համատեքստում:
2. Թեև նշվում է, որ լեզվամեթոդական համակարգը հիմնված է դիդակտիկական սկզբունքների վրա, սակայն չի հիմնավորվում, թե ինչպես են այդ սկզբունքները հարմարեցվում հատկապես եռալեզու թարգմանության ուսուցման համատեքստին: (էջ 88-90)

3. Խմբային աշխատանքի կարևորությունը շեշտվում է, սակայն չի նկարագրվում, թե ինչպես է պետք կազմակերպել խմբային աշխատանքը բանավոր թարգմանության ուսուցման ժամանակ:

4. Ընդհանուր առմամբ, ատենախոսության մեջ կարելի է նշել ոճական բնույթի որոշ վրիպումներ:


Այսպիսով, կարելի է վստահորեն պնդել, որ Նարինե Անդրանիկի Բուկուշյանի «Բանավոր թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգը (կոմպլեքսնալային մոտեցման հիման վրա)» ատենախոսությունը ամբողջական, լեզվական և գիտական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ. 00. 02 թվանիշով/ գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջներին, միջնորդում եմ ՀՊՄՀ-ում գործող՝ ԲԿԳԿ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առջև նրա հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ



Ս. Խ. Բադալյան

Ս. Խ. Բադալյանի ստորագրությունը
հաստատում եմ ՀՊՄՀ-ի գիտ. քառուղար



Ս. Մ. Բադալյան

10. 04. 2025թ.